ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱՂՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Է փոստ haghpat.lori@mta.gov.am
հեռ.-0-253-6-01-02

ՀԳ –26
<<13>> փետրվարի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

Հարգարժան մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում Հաղպատ համայնքի ավագանու 08.02.2017թ-ի թիվ 3-6 որոշումները:

Առդիր՝ 13 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Վ. Քառյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» փետրվարի 2017թ. ԹԻՎ 3-Ա

ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 Թ-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

Հաստատել Հաղպատ համայնքի ավագանու 2017թ-ի փետրվարի 8-ի նիստի օրակարգը.

1. ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.02.2017Թ-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Ալիխանյան Աշոտ Ս.			
2	Բաբայան Արման Հ.			
3	Բեժանյան Ավետիք Ա.			
4	Մեջլումյան Արթուր Ս.			
5	Վարոսյան Վալերի Կ.			

Համայնքի ղեկավար Վ. Քառյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«08» փետրվարի 2017թ. ԹԻՎ 4-Ն

ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով

Հաղպատ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հաղպատ համայնքի 2016թ-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Ալիխանյան Աշոտ Ս.			
2	Բաբայան Արման Հ.			
3	Բեժանյան Ավետիք Ա.			
4	Մեջլումյան Արթուր Ս.			
5	Վարոսյան Վալերի Կ.			

Համայնքի ղեկավար՝ Վ. Քառյան

Կ.Տ.

Հավելված

Հաղպատ համայնքի ավագանու

2017 թ-ի փետրվարի 08-ի թիվ 4-Ն որոշման

ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍՈՎ

	Եկամուտներ	Պլան /հազ. դրամ/	Փաստացի /հազ. դրամ/	Կատ. %
1	Հողի հարկ	1028.1	1033.7	100,5
2	Գույքահարկ շենք – շինություններից	360.7	651.11	180,5
3	Գույքահարկ ֆիզիկ. անձանց	1346.5	1512.7	112,3
4	Տեղական տուրքեր	400.0	591.0	147,7
5	Այլ եկամուտներ	3142.0	1517.9	48,3
6	Դոտացիա	14096.6	14096.6	100
7	Հողի վարձավճար	750.0	793.6	105,8
10	Հողի օտարում	2516.1	2516.1	100
	Ընդամենը	21123.9	20196.6	95,6

ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՈՎ

		Պլան /հազ. դրամ/	Փաստացի /հազ. դրամ/	Կատ. %
1	Աշխատավարձ	12642.9	12510.8	99
2	Էներգետիկ ծառայություն	1500.0	1425.0	95
3	Աղբահանություն	700.0	510.0	72,9
4	Կապի ծառայություն	200.0	153.0	76,5
5	Գործուղումներ	210.0	203.2	96,8
6	Համակարգչային ծառայություն	80.0	80.0	100
7	Տեղեկատվական ծառայություն	30.0	22.0	73,3
8	Զբոսաշրջություն	80.0	80.0	100
9	Ընդհանուր բնույթի ծառայություն	180.0	180.0	100
10	Մասնագիտական ծառայություն	25.0	25.0	100
11	Սարքավ. ընթացիկ նորոգում	50.0	50.0	100
12	Գրասենյակային նյութեր	200.0	198.0	99
13	Տրանսպորտային նյութեր	800.0	734.0	91,8
14	Հատուկ նպատ. նյութեր	285.0	52.0	18,2

15	Դրամաշնորհներ	3000.0	2969.5	99
16	Հանրային նյութեր կենցաղային	30.0	30.0	100
17	Հուղարկավորության նպաստ	300.0	240.0	80
18	Այլ նպաստներ բյուջեից	400.0	380.0	95
19	Տրանսպորտի ձեռքբերում	2000.0	1134.6	56,7
20	Նախագծեր ջրագիծ	2000.0	1187.0	59,4

Հաղպատ համայնքի ղեկավար՝ Վ. Քառյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«08» փետրվարի 2017թ. ԹԻՎ 5-Ն

ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,

Հաղպատ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հաղպատ համայնքի 2016թ-ի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Ալիխանյան Աշոտ Ս.			
2	Բաբայան Արման Հ.			
3	Բեժանյան Ավետիք Ա.			
4	Մեջլումյան Արթուր Ս.			
5	Վարոսյան Վալերի Կ.			

Համայնքի ղեկավար՝ Վ. Քառյան

Կ.Տ.

Հավելված

Հաղպատ համայնքի ավագանու

2017թ-ի փետրվարի 08-ի թիվ 5-Ն որոշման

ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն, որ Հաղպատ համայնքին 2016 թվականին բնապահպանական սուբվենցիա չի հատկացվել, զարգացման ծրագրի վերջնական իրականացման համար ունեցել ենք լուրջ ֆինանսական դժվարություններ:

Զարգացման ծրագրի շրջանակներում համայնքում իրականացվել են մի շարք աշխատանքներ.

1. 2016թ-ին լիարժեք գործել է Հաղպատի նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ը, որտեղ հաճախում են 25 երեխաներ: Հաղպատի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ը ունի 6 աշխատող: Մանկապարտեզը ֆինանսավորվել է համայնքի սեփական եկամուտների հաշվին, և նրա պահպանության համար ծախսվել է 2969,5 հազար դրամ:
2. Կատարվել է մայրուղուց Հաղպատ ճանապարհի և ներհամայնքային փողոցների նորոգման և բարեկարգման աշխատանքներ: Ավտոճանապարհի հիմնանորոգման համար համայնքապետարանը դիմել է ՀՀ կառավարությանը:
3. Համայնքային կենտրոնի վերանորոգումից հետո աշխուժացել է մշակութային կյանքը: 2016թ-ին գործել են պարի և նկարչության խմբակներ, տոնական օրերին կազմակերպվել են միջոցառումներ:
4. Զարգացման ծրագրի շրջանակներում կատարվել են խմելու ջրագծի վերանորոգման աշխատանքներ: Մի քանի թաղամասերում վերանորոգվել են բակային աղբյուրները: Կազմվել է ծրագիր՝ համայնքում 2015թ-ին սկսված խմելու ջրագծի աշխատանքները ավարտին հասցնելու համար:
5. 2016 թ-ին նորոգման աշխատանքներ են կատարվել ոռոգման ջրագծերում: Մասնավորապես կոռոզիայի ենթարկված խողովակաշարերից 80 գծմ փոխարինվել է պլաստմասե խողովակով:
6. Համայնքում սիստեմատիկ կատարվել է աղբահանություն: Հավաքված աղբը տեղափոխվել է Ալավերդու լիցենզավորված աղբավայր: Համայնքում հաճախակի իրականացվել են շաբաթօրյակներ, փողոցային լուսավորության լուսակետերում կատարվել են ընթացիկ վերանորոգումներ:
7. Լիզինգային կարգով ձեռքբերված գյուղտեխնիկայի համար կատարվել է 1134,6 հազար դրամ փոխանցում՝ համաձայն պայմանագրի:

Այս բոլոր ծրագրերը ընդգրկված էին Հաղպատ համայնքի զարգացման ծրագրում:

Համայնքի ղեկավար՝ Վ. Քառյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«08» փետրվարի 2017թ. ԹԻՎ 6-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հաղպատ գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Հաղպատ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հաղպատ գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> N 30-Ն և <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հաղպատ համայնքում 2017 թվականի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 31-Ն որոշումները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Ալիխանյան Աշոտ Ս.			
2	Բաբայան Արման Հ.			
3	Բեժանյան Ավետիք Ա.			
4	Մեջլումյան Արթուր Ս.			
5	Վարոսյան Վալերի Կ.			

Համայնքի ղեկավար՝ Վ. Քառյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 8-ի թիվ 6-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15 000 /տասնհինգ հազար / դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 /հիսուն հազար / դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 / մեկ հարյուր հազար/ դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝3000 / երեք հազար/ դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 /երեք հազար / դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝

ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 /հինգ հազար / դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝60 000 / վաթսուն հազար/ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝50 000 / հիսուն հազար/ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 /հինգ հազար/ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 /հինգ հազար հինգ հարյուր/ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 /յոթ հազար/ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝10500 /տաս հազար հինգ հարյուր/ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 /տասնհինգ հազար / դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ,

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 /հինգ հազար/ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 /վեց հազար/ դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 /ութ հազար/ դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 /տասնմեկ հազար/ դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 /քսան հազար/ դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 /քառասունվեց հազար / դրամ

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 / երեք հարյուր հիսուն / դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 205 000 /երկու հարյուր հինգ հազար/ դրամ

դ. խաղատների համար՝ 510 000 /հինգ հարյուր տաս հազար/ դրամ

ե. շահումով խաղերի համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ

զ. վիճակախաղերի համար՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5500 /հինգ հազար հինգ հարյուր/ դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6500 /վեց հազար հինգ հարյուր/ դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11 000 /տասնմեկ հազար/ դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16 000 /տասնվեց հազար/ դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 21 000 /քսանմեկ հազար/ դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 26 000 /քսանվեց հազար/ դրամ

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 750 /յոթ հարյուր հիսուն/ դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1100 /մեկ հազար մեկ հարյուր/ դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2100 /երկու հազար մեկ հարյուր/ դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4100 /չորս հազար մեկ հարյուր/ դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8100 /ութ հազար մեկ հարյուր/ դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16 000 /տասնվեց հազար/ դրամ

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 /վեց հարյուր/ դրամ

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 /մեկ հազար հիսուն/ դրամ

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 / զրո/ դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450 /չորս հարյուր հիսուն/ դրամ

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 750 000 /յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2100 000 /երկու միլիոն մեկ հարյուր հազար/ դրամ

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3000 000 /երեք միլիոն/ դրամ

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 2000 /երկու հազար/ դրամ

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 /մեկ հարյուր/ դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 /տասը/ դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 /մեկ հարյուր/ դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 /քսան / դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 8000 /ութ հազար/ դրամ:

9) Ոռոգման ջրի վարձավճարը՝

1) մայիսից մինչև հոկտեմբեր ամիսներին սահմանել՝

0-500 քմ – 300 /երեք հարյուր/ դրամ

500-1000 քմ – 500 /հինգ հարյուր/ դրամ

1000-2000 քմ – 1000 /մեկ հազար/ դրամ

2000-3000 քմ - 1200 /մեկ հազար երկու հարյուր/ դրամ

2)Կենցաղային օգտագործման համար ոռոգման ջրի վարձավճարը սահմանել 1 անձի համար ամսական 100 /մեկ հարյուր/ դրամ

10) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարը սահմանվում է 1 երեխայի համար ամսական 5000 /հինգ հազար/ դրամ

11) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարը սահմանվում է 1 երեխայի համար ամսական 2000 /երկու հազար/ դրամ

12) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակում ավտոտրանսպորտային միջոցը կայանելու համար կայանատեղի տեղական վճար սահմանել 1 մեքենայի համար 200 /երկու հարյուր/ դրամ

13) <<Բելառուս>> մակնիշի տրակտորի կողմից կատարված 1 հա խոտհավաքի վարձավճարը սահմանել 10 000 /տասը հազար/ ՀՀ դրամ: Այլ աշխատանքներ կատարելու համար տրակտորի վարձավճար սահմանել 1 ժամը 5000 /հինգ հազար/ դրամ

14) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար սահմանել 800 /ութ հարյուր/ դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Լ. Մեհրաբյան